



Երեց Վալերի Վ. Կորդոն

Յոթնասուրևի Զվորումից

Հրաշալի դաս



«Արդեօք չե՞մ բանալ ձեզ համար երկնքի պատուհանները եւ օրհնութիւն թափել ձեզ համար» (Մատթաթիս 3.10):

Ես մեծացել եմ Գվատեմալայում, որտեղ իմ ընտանիքն ուներ գործարան, որն արտադրում էր համազգեստ սպորտային խմբերի համար:

Հայրս ցանկանում էր, որ մեր ընտանիքի երեխաները սովորեին ջանասիրաբար աշխատել: Մենք օգնում էինք նրան գործարանում: Փոքր ժամանակ ես հաճախ էի խնդիրներ ունենում: Ես միշտ ինչ-որ բան էի կոտրում: Սակայն երբ մեծացա, հայրս թույլ տվեց ինձ հետևել գործող մեքենաներին:

Հայրս վճարում էր մեզ մեր աշխատանքների դիմաց: Սպա նա հարցնում էր. «Ի՞նչ եք անելու ձեր գումարով»: Ես գիտեի, թե որն էր ճիշտ պատասխանը. «Վճարելու եմ իմ տասանորդը և խնայելու եմ իմ միսիայի համար:

Երբ ես մոտ 13 տարեկան էի, մեր բիզնեսը շատ գումարներ կորցրեց: Մենք ստիպված էինք ազատվել մեր կարի մեքենաների մեծ մասից: 200 աշխատողներ ունենալու փոխարեն մենք ունեինք հինգ աշխատող: Նրանք աշխատում էին մեր տան ավտոտնակում:

Ես միշտ վճարել եմ իմ տասանորդը, սակայն երբեք իրականում չէի հասկանում, թե որքան կարևոր էր դա: Սպա ես հրաշալի մի դաս սովորեցի: Մի կիրակի առավոտ ես լսեցի, թե ինչպես էին ծնողներս շշուկով խոսում: Հայրս ասաց մորս, որ բավականաչափ գումար կար կամ տասանորդ վճարելու, կամ ուտելիք գնելու համար: Բավականաչափ գումար չկար երկուսի համար: Ես անհանգիստ էի: Ի՞նչ կաներ հայրս:

Կիրակի օրը ես տեսա, թե ինչպես հայրս մի ծրար տվեց մեր ճյուղի նախագահին: Նա ընտրեց տասանորդ վճարելը: Ես ուրախ էի, որ նա արեց դա, սակայն նաև անհանգիստ էի: Ի՞նչ ենք ուտելու մենք:

Հաջորդ օրը որոշ մարդիկ թակեցին մեր դուռը: Նրանք ասացին հորս, որ իրենց շտապ համազգեստ էր պետք: Սովորաբար մարդիկ վճարում էին մեզ պատվերը կատարելուց հետո: Սակայն այս մարդիկ վճարեցին հորս հենց այդ օրը՝ նույնիսկ նախքան համազգեստը կարելը:

Երկու օրում ես սովորեցի մի գեղեցիկ դաս, որը կհիշեմ ողջ կյանքում: Տասանորդի օրենքն օգնում է մեզ կառուցել մեր հավատը և ցուցադրել մեր երախտագիտությունը Երկային Հորը: Տասանորդ վճարելը օրհնություն է: ■

ՆԱԽԸՐ: ԲԵՆԵՄՆ ԴՈՒՄԱՆ